միշտ արիւնակցական կապերով կապուած էին, միեւնոյն կրօնն ունէին, իրար շատ հասկանալի լեզուով էին խօսում: Սրանց վերայ պէտք է աւելացնել, որ Աքեմենեան-ները իրենց աղջիկներին սովորաբար տալիս էին քաջ իշխաններին, որեւէ յաղթանակից յետոյ եւ նրանց յանձնում էին որեւէ կուսակալութիւն: Քանի որ պատմագիրները գրել են թէ արիւնակցական կապ է եղել Արշակունիների եւ Աքեմենիդների մէջ, ի՞նչ է չենթադրել, որ Արշակի, Տրդատի մայրը կամ մամը կարող էր լինել Աքեմենեան տոհմից:

Ինչ էլ որ լինի, ենթադրութիւնները եթէ մի կողմ թողնենք, Ճորոխի Աւազանի լեռները, քարերը, գեղերը, առուակները, ո՛չ թէ մի, երկու, երեք տեղ, այլ քսան եւ աւելի տեղ վկայում են, որ իրենք Պահլաւների անուանադրածներն են, Պահլաւ-Պարթեւների օթեւանը եւ բնակավայրն են եւ այդ տոհմը ծնել, զարգացել եւ տարածուել է այս աշխարհից: Ինչպէս յայտնի է կուսակալ-սատրափը որեւէ վիճակի վարիչ գնալիս, նա մենակ չէր գնում, այլ ընտանիքով, զաւակներով, եղբայրներով եւ մեծ գունդ 500—1500 սեպուհներով: Հին ժամանակները, ինչպէս եւ նեբկայիս Իրանում հիմնարկութիւն չկայ, վարիչ սատրափը ինքն իր հետ տանում էր իր ազգականներին, մտերիմներին եւ վստահացածներերին, որոնց յանձնում էր երկրի գաւառների վարչու-